


Ալմաստը կարծրության էտալոնն է: Այն հեշտությամբ կտրում է ապակին և քերծում մետաղները: Բնության մեջ չկա այնպիսի նյութ, որ կարողանա քերծել ալմաստը: Իսկ լաբորատորիայում կա. դա բորազոնն է՝ բորի նիտրիդի ձևափոխությունը: Բորի նիտրիդը (BN_3) դժվարահալ, քիմիապես կայուն նյութ է, որն ըստացվում է սպիտակ գույնի նուրբ փոշու ձևով: Իր կազմությամբ և հատկություններով նա շատ նման է գրաֆիտին և կարող է նույնիսկ ծառայել որպես լըսանյութ, որի համար էլ ստացել է «սպիտակ մուր» և «սպիտակ գրաֆիտ» անունները:

Գերբարձր ճնշման տակ բորի նիտրիդի, ինչպես և գրաֆիտի ստրուկտուրան փոխարկվելով մոտենում է ալմաստի ստրուկտուրային: Այդպիսի ստրուկտուրայով բորի նիտրիդը կոչվում է բորազոն:

1957 թվականին ԱՄՆ-ում ստացվել է բորազոն, որն ավելի ամուր և ջերմակայուն է, քան ալմաստը: Այն այրվում է միայն 2000°C ջերմաստիճանում, մինչդեռ ալմաստն այրվում է 871°C -ում:

Լեռնային գործում, մեքենաշինության և սարքաշինության մեջ բորազոնը հաջողությամբ փոխարինում է ալմաստին:



ՏՐԱՄԱՐԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Աղամյանների ընտանիքը բաղկացած է չորս անձից՝ հայրը, մայրը և երկու երեխաներ: Շատախոս հարևանուհիներից մեկին ինձ ասաց, որ

Գուրգենն ու Նունեն՝ արյունակիցներ են,

Արամը Գուրգենից մեծ է,

Աստղիկը փոքր է Արամից,

Աստղիկը մեծ է Նունեից:

Եթե հարևանուհու ասածից միայն երկուսն է ճիշտ, ապա ինչպես են կոչում ընտանիքի անդամներից յուրաքանչյուրին:

2. Պողոս, Պետրոս, Մարտիրոս—սրանք հրշեջի, միլիցիոնների և ուսուցչի անուններն են: Մի մարդ պատմում էր, որ՝

Պողոսը և ուսուցիչը հարևաններ են,

Պետրոսը և ուսուցիչը հարևաններ են,

Պողոսը և Մարտիրոսը հրշեջի հարևաններն են,

Միլիցիոնները և հրշեջը Պետրոսի հարևաններն են,

Բոլոր երեքն էլ միմյանց հարևաններ են:

Սակայն, այս բոլոր ասվածներից իրականում ճիշտ են միայն երկուսը:

Կարո՞ղ եք ասել, թե ո՞վ ինչով է զբաղվում:

3. Յուրաքանչյուր տառ նշանակում է մի թվանշան: Փորձեցեք վերծանել բաղմապատկման հետևյալ օրինակը.

ՍՕԵ

ՈԿԵ

ՄԹՈԵ

ՕՕԱՕ

ՄՍՆՈ

Պատասխանները տե՛ս հաջորդ էջում